# Հանրապետության արտաքին հարաբերությունները

## Հայ-վրացական հարաբերությունները: Լոռու և Ջավախքի հիմնահարցերը

1918 թ. մայիսի վերջին՝ Անդրկովկասի երեք հանրապետությունների անկախության հռչակումից հետո, միջպետական նորմալ հարաբերություններ հաստատելու ճանապարհին ամենակնճռոտ խնդիրը սահմանային հարցերն էին: Ինչպես նշվել է, Հայոց ազգային



խորհուրդն անկախության հռչակագրում իրեն հայտարարում էր «Հայկական գավառների» գերագույն ու միակ իշխանություն՝ առանց նշելու կոնկրետ սահմաններ: Նման քաղաքականության ընտրությունն ինքնանպատակ չէր: Դրանով ազգային խորհուրդը մի կողմից՝ խուսափում էր ռազմաքաղաքական բարդ իրավիճակում Թուրքիայի և նորաստեղծ հարևան պետությունների հետ տարածքային վեճերի մեջ հայտնվելու վտանգից, մյուս կողմից՝ թողնելով անորոշ սահմաններով, հայտնում էր իր իրավունքները հայկական տարածքների նկատմամբ: Տվյալ դեպքում այդպիսին կարող էին նկատվել Վրաստանի կողմից վիճելի համարվող Թիֆլիսի նահանգի հարավային մասը՝ հայկական ու հայաբնակ Բորչալուի (Լոռի) ու Ախալքալաքի գավառները: Սակայն այդ խնդիրն անմիջապես չծագեց, քանի որ տվյալ տարածքի մեծ մասն առժամանակ թուրքական զորքերի կողմից մնաց ռազմակալված: Բայց այդ հարցում Վրաստանի կառավարության հավակնություններն արդեն ի հայտ եկան 1918 թ. հունիսի սկզբին, երբ գերմանացիների համաձայնությամբ նրանք հսկողություն սահմանեցին Հյուսիսային Լոռու նկատմամբ (Հարավային Լոռին մնաց բռնազավթված), իսկ հունիսի 4-ին Օսմանյան կայսրության հետ Բաթումում կնքած հաշտության պայմանագրով իրենց իրավունք վերապահեցին թուրքերին հանձնելու հայաշատ Ախալցխայի և Ախալքալաքի գավառները:

Իր հերթին, Վեհիբ փաշան, օգտվելով հայ-վրացական տարաձայնություններից, հունիսին գեներալ Թ. Նազարբեկյանին ուղղած հեռագրում հայտնում էր, որ թուրքական զորքերի կողմից մի շարք գավառների, մասնավորապես Լոռի-Բորչալուի՝ որպես հայ-վրացական վիճելի տարածքի պահելը իրենց զորքերի կողմից բխում է հայերի շահերից, որովհետև հակառակ դեպքում վրացիները կգրավեն տվյալ տարածքը[275]:

1918 թ. հունիսի սկզբից Վրաց և Հայոց ազգային խորհուրդները սկսեցին բանակցություններ հայ-վրացական վիճելի խնդիրների, այդ թվում՝ վիճելի տարածքների շուրջ: Վրաց ազգային խորհրդի անդամները նախապես առաջարկում էին սահմանազատման հարցում առաջնորդվել ազգագրական սկզբունքով: Սակայն շուտով նրանք հայտարարեցին, որ Վրաստանը ռազմավարական նկատառումներով չի կարող հրաժարվել Ախալքալաքից և Լոռուց, ինչպես և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանից: Ընդ որում՝ վրաց գործիչները հավաստիացնում էին, որ դա բխում է նաև այդ տարածքների հայ բնակչության շահերից, քանի որ Գերմանիայի հովանավորությանն արժանացած Վրաստանում հայերի համար ևս կստեղծվեն կյանքի ավելի ապահով պայմաններ: Ազգագրական սկզբունքից հրաժարվելու վրացական կողմի այդ քայլի դեմ բողոքեց Խ. Կարճիկյանը՝ վրաց մենշևիկների նման մոտեցումը բնութագրելով որպես Հայաստանը Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանելու գործելակերպ: Որոշվեց մինչև նոր խորհրդաժողովի անցկացումը վիճելի տարածքների հարցը թողնել առկախ:

Հայ-վրացական հարաբերությունների կնճռոտ հարցերից էր նաև հայ գաղթականության խնդիրը: 1918 թ. հուլիսի սկզբին Վրաստանի կառավարությունը մերժեց Հայոց ազգային խորհրդի միջնորդությունները՝ գաղթականներին, որոնց մեծ մասն ախալքալաքցիներ էին, Վրաստանի խորքերը տեղափոխելու, ինչպես և Բորչալուից հեռացած մահմեդականների բնակավայրերում տեղավորելու իրավունք տալու վերաբերյալ՝ իր այդ մերժի քայլը «բացատրելով» համաճարակների տարածումը Վրաստանում կանխելու պատճառաբանությամբ[276]: Վրաց ազգայնական մամուլը ոչ միայն պաշտպանեց իր կառավարության այդ որոշումը, այլև փորձեց Հայոց ազգային խորհրդին, հատկապես

[275] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)..., վավ. 27, էջ 49:

[276] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 127–127ա: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ (ՊԻԱ), Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1, գ. 264, թ. 1–2:

նրա դաշնակցական անդամներին մեղադրել հայ գաղթականությանը Վրաստան մուտք գործելու միջոցով վրաց ժողովրդի մեջ զանազան համաճարակային հիվանդություններ տարածելու մտադրության մեջ:

Գաղթականության հոգսերի ամբողջ ծանրությունը մնաց հայկական կազմակերպությունների վրա: Սակայն գաղթականության զանգվածն այնքան մեծ էր (80–85 հազար մարդ), որ ցույց տված օգնությունը չէր կարող բավարարել մարդկանց նվազագույն պահանջները: 1918 թ. հունիսից մինչև նոյեմբեր Բակուրիանիի անտառներում զոհվեց ավելի քան 18 հազար մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծալկայի և Մանգլիսի շրջաններում ապաստանած հայ գաղթականները: Մինչև հաջորդ գարուն ախալքալաքցի գաղթականների կորուստները հասան 40 հազարի[277]:

Ինչպես երևում է, երկու երկրների անկախության հռչակումից քիչ անց արդեն հայ-վրացական հարաբերություններում հաստատվեց սառնություն, որը հետզհետե վերածվեց հակամարտության: Փոխադարձ անվստահության մթնոլորտը չփոխվեց նաև 1918 թ. հուլիսի 17-ին Թիֆլիսից Հ. Քաջազնունու կառավարության Երևան մեկնելուց հետո: Վրաստանի իշխանությունները հարկ չհամարեցին ոչ միայն բավարարել հայկական կողմի արդարացի պահանջը անդրկովկասյան գույքի իր մասնաբաժնի վերաբերյալ (շոգեքարշեր, երկաթուղային վագոններ, մշակութային արժեքներ և այլն), այլև, չպահպանելով անգամ պատշաճության տարրական նորմերը, կազմակերպել Երևան մեկնող Հայոց ազգային խորհրդի և կառավարության պաշտոնական հրաժեշտի արարողություն:

Ա. Ջամալյանը նշանակվեց Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ: Շուտով Վրաստանը ևս նշանակեց իր ներկայացուցիչը Հայաստանում:

1918 թ. օգոստոսին Հայաստանի իշխանությունները ստացան առաջին ահազանգերը վրացական զորքերի կողմից ռազմակալված Հյուսիսային Լոռու, հատկապես Ալավերդու շրջանի բնակավայրերի հայ բնակչությանը բռնությամբ զորակոչի ենթարկելու վերաբերյալ, ինչի առթիվ Ա. Ջամալյանն իր կառավարության անունից մի քանի անգամ բողոքի հուշագրեր ներկայացրեց Վրաստանի արտգործնախարարությանը: Սակայն հայ գյուղացիության նկատմամբ բռնությունները շարունակվում էին:

1918 թ. հոկտեմբերի սկզբներին թուրքական զորքերը հեռացան Հարավային Լոռուց: Թուրքական հրամանատարության հետ համաձայնեցված՝ Հայաստանի կառավարության հրամանով Դիլիջան-Լոռու զինված ուժերը, Դրոյի հրամանատարությամբ, մտան Ղարաքիլիսա և մինչև հոկտեմբերի 21-ը հսկողության տակ վերցրին Ջալալօղլի-Դսեղ գիծն ընդգրկող տարածքը: Սակայն դեպի հյուսիս նրանց առաջխաղացումը կանգնեցրին գերմանական պահակային ջոկատները: Գերմանացի սպա Ֆ. ֆոն Քրեսը Լոռու տարածաշրջան զորք մտցնելու համար նույնիսկ Հայաստանին սպառնաց պատերազմով: Վրացական ուժերը, օգտվելով գերմանական աջակցությունից, ռազմակալեցին Դսեղ-Ջալալօղլուց հյուսիս գտնվող հայկական գյուղերը և ներկայացված վերջնագրով հայկական զորքերից պահանջեցին մինչև հոկտեմբերի 22-ը լքել ամբողջ գավառի տարածքը՝ մինչև Շահալիի երկաթուղային կամուրջը: Այդ քայլը մեծ վրդովմունք առաջացրեց Հայաստանում: Կառավարությունն ու խորհրդարանը անընդունելի համարեցին վրացիների վերջնագիրը և հրահանգեցին հայկական ուժերին վրացական զորքերի առաջխաղացման դեպքում դիմադրություն ցույց տալ:

Հոկտեմբերի 23-ին գեներալ Ծուլուկիձեի հրամանով վրացական զրահագնացքը ներխուժեց Այրում կայարան, ապա ռմբակոծեց Շնող գյուղը: Ամենուր սկսեցին հայ գյուղացիներին պարտադրել ճանաչել վրացական իշխանությունը:

277 Տե՛ս ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձնական ֆոնդ 1, ց. 1, գ. 264, թ. 1–2:



Շուտով ստացվեց համաշխարհային պատերազմում գերմանական խմբավորման պարտության լուրը: Վրաստանի ղեկավարությունն ավելի զգուշավոր դարձավ և անգամ առաջարկեց հարցը քննարկելու համար հրավիրել հատուկ խորհրդաժողով: Թեև հայ-վրացական զորքերի շփման գծում հաստատվեց հարաբերական դադար, սակայն վրացիները չհրաժարվեցին հակահայկական գործողություններից: Տարանցման մասին միջպետական համաձայնագրի բացակայության պատճառաբանությամբ Վրաստանի կառավարությունը շարունակեց արգելքներ հարուցել երկաթուղով Հայաստան կենսական նշանակություն ունեցող բեռների փոխադրմանը, սաստկացրեց բռնությունները Լոռու հայ բնակչության հանդեպ: «Վրաց զինուորները,– գրում է Ս. Վրացյանը,– …խուզարկութիւնների պատրւակով մտնում էին տները եւ տանում ինչ որ պատահի: …Ենիչէրիական կարգեր էին սահմանել Լոռիում, ուր վրացին ամէն ինչ էր, հայը՝ ճնշուած ռայեա»[278]: Նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին սանձարձակություններ անող վրացի զինվորների և Ուզունլար (Օձուն) ու Սանահին գյուղերի բնակիչների միջև եղան արյունալի բախումներ:

Նոյեմբերին թուրքերը սկսեցին զորքերը հետ քաշել նաև Ախալցխայի և Ախալքալաքի գավառներից: Ինքնաբերաբար մեջտեղ եկան նաև այդ գավառների պատկանելության և գաղթականության վերադարձի խնդիրները: Հաղթահարելով վրաց զինվորական իշխանությունների հարուցած զանազան արգելքները՝ Ախալքալաքի գաղթականության բեկորները հաճախ շրջանցիկ ճանապարհներով սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու թալանված բնակավայրերը: Բակուրիանիից հայրենի գավառ անցնելու թույլտվության դիմաց վրաց զինվորականները գաղթականներից պահանջում էին ստորագրություններ վրացահպատակություն ընդունելու, գավառը Վրաստանի մաս ճանաչելու մասին[279]:

Ախալքալաքից հեռանալուց առաջ թուրքական հրամանատարությունը նոյեմբերի 20-ից 25-ն ընկած ժամանակահատվածում միաժամանակ (միմյանցից գաղտնի) և՛ Վրաստանի, և՛ Հայաստանի կառավարություններին տեղեկացրեց գավառը նրանց հանձնելու մասին: Վրացական ղեկավարությունը չհապաղեց «օգտվել» թուրքերի ընձեռած հնարավորությունից և անցավ ակտիվ գործողությունների:

Թիֆլիսից նոյեմբերի 29-ին ստացվեց տարածքային հարցերի լուծման վերաբերյալ Վրաստանի կառավարության «նոր» տեսակետը: Վրացական կողմի կարծիքով՝ հայ-վրացական սահմանագիծը պետք է անցներ նախկին Թիֆլիսի նահանգի հարավային սահմանով, այսինքն՝ Լոռին և Ախալքալաքը մտնելու էին Վրաստանի կազմի մեջ: Դրան հաջորդեցին ավելի գործնական քայլեր. կազմվեց Ախալքալաքի վրացական վարչություն, նշանակվեց նահանգապետ, զորքերը բերվեցին մարտական պատրաստության:

Ի պատասխան նման մոտեցման, որը հակասում էր խաղաղ միջոցներով և էթնիկ-ազգագրական սկզբունքի հիման վրա վիճելի հարցերը լուծելու վերաբերյալ նախկինում ձեռք բերված համաձայնություններին, դեկտեմբերի 2-ին Հայաստանի արտգործնախարարությունը Հայաստանում Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանու միջոցով բողոքի նոտա ներկայացրեց Վրաստանին: «Ախալքալաքի գավառն ամբողջությամբ և Բորչալուի գավառի մեծ մասը,– ասվում էր Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Ս. Տիգրանյանի ստորագրությամբ ներկայացված նոտայում,– իրենց բացարձակ գերակշիռ հայ բնակչությամբ հանդիսանում են Հայաստանի անբաժան մասերը»[280]:

Հայաստանի կառավարության դեկտեմբերի 1-ի նիստում հայ-վրացական հարաբերություններն է՛լ ավելի չսրելու նկատառումով որոշվել էր ձեռնպահ մնալ Ախալքալաքի

278 Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 224:

279 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 131ա:

280 Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)..., վավ. 49, էջ 74:

գավառ կանոնավոր զորքեր մտցնելուց: Սակայն դեկտեմբերի 5-ի առավոտյան Վրաստանի կառավարությունը գեներալ Մախաևի (Մաղաշվիլի) գլխավորությամբ զինված ուժեր մտցրեց նաև Ջավախք և գրավեց նրա կենտրոն Ախալքալաքը:

Գերակշիռ վրացական ուժերի հետ չբախվելու համար հայկական փոքրաթիվ ջոկատը ստիպված դուրս եկավ գավառից: Վրացական զորքերը Ախալքալաքում «կարգ ու կանոն հաստատելու նպատակով» զինաթափեցին տեղի ինքնապաշտպանական ուժերը, մինչև դեկտեմբերի 10-ը հսկողության տակ վերցրին ամբողջ գավառը, ստեղծեցին վրացական վարչություն, սկսեցին խոչընդոտել դեռ հայրենի օջախներ չվերադարձած գաղթականների մնացած մասի տունդարձը: Միաժամանակ վրացական ուժերը Լոռիում անցան պատժիչ գործողությունների: Դեկտեմբերի 8-ից 10-ը՝ ուժեղ ռմբակոծությունից հետո, կանոնավոր զորքերը շարժվեցին Ուզունլար, Սանահին, Աքորի և այլ գյուղերի վրա: Փաստորեն, վրացական կողմը նախընտրեց խնդրի լուծման ռազմական տարբերակը:

Հայաստանի խորհրդարանը Ախալքալաքի և Բորչալուի գավառների հայ բնակչության անվտանգության ապահովման ու այդ տարածքները վրացական զորքերից ազատագրելու նպատակով Հ. Քաջազնունու կառավարությանն ազատ գործելու իրավունք արտոնեց[281]:

Հայ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, ժամանակի հայ մամուլը ցավով ընդունեցին եղբայրասպան պատերազմի լուրը, սակայն միանգամայն արդարացի համարեցին հայկական կողմի մոտեցումները և պաշտպանեցին Հայաստանի կառավարության գործողությունները: Դիլիջան-Լոռու և Ալեքսանդրապոլի շրջանում գործող հայկական զորքերը կառավարությունից հակահարձակման անցնելու հրաման ստացան:

Դեկտեմբերի 11-ից 12-ը հայկական դիվիզիայի 4-րդ հետևակային գնդի մեկ գումարտակ Ալեքսանդրապոլից շարժվեց դեպի Ախալքալաք և վրացական զորքերի հետ ընդհարվելուց հետո հսկողության տակ վերցրեց գավառի մեծ մասը: Վրացական ուժերը քաշվեցին դեպի հյուսիս: Դեկտեմբերի 14-ին Դրոյի գլխավորած ուժերը առաջացան նաև Վորոնցովկա-Պրիվոլնոյե-Օփրեթ ուղղությամբ: Նույն օրվա գիշերը գնդապետ Տեր-Նիկողոսյանի զորաջոկատը չեշտակի գրոհով ազատագրեց Վորոնցովկան և Պրիվոլնոյեն: Շատ չանցած՝ գնդապետ Նեստերովսկու զորաջոկատը փայլուն հաղթանակ տարավ Սանահինում, որտեղ հայերի ձեռքն ընկավ մոտ 50 վագոն և մեկ շոգեքարշ: Հաղպատի մոտ տեղի գյուղացիները վնասեցին երկաթգիծը՝ փակելով հակառակորդի նահանջի ճանապարհը: Դեկտեմբերի 15-ին վրացական կողմը հարկադրված նահանջեց նաև Ալավերդուց: Ախթալայի մոտ հայկական ուժերը տիրեցին երկու զրահագնացքի, և դրանք անմիջապես մտցրին գործողության մեջ: Ծուլուկիձեին հազիվ հաջողվեց փրկվել՝ դիմելով փախուստի և ավար թողնելով անձնական վագոնը[282]: Ձախ թևում ևս հայկական զորքերն ունեցան լուրջ հաջողություններ. դեկտեմբերի 18-ին Տեր-Նիկողոսյանի ուժերը մտան Բոլնիս Խաչեն, մի քանի օր անց՝ նաև Հյուսիսային Լոռու հայկական մյուս նշանավոր ավանը՝ Շուլավեր:

Վրաստանում հայ բնակչության նկատմամբ իսկական մարդաորս սկսվեց: Հազարավոր հայեր հայտարարվեցին ռազմագերիներ և աքսորվեցին Քութայիս: Վրաստանի կառավարությունը թարմ ուժեր ուղարկեց Սադախլո, որտեղ սկսվեցին արյունալի մարտեր: Նրանք հակահարձակման անցան նաև Բոլնիս-Խաչենի ուղղությամբ: Դեկտեմբերի 23-ի կատաղի մարտերից հետո Սադախլոն ևս անցավ հայերի հսկողության ներքո: Վրաստանի կառավարությունը Ծուլուկիձեի փոխարեն ճակատ ուղարկեց գեներալ Գ. Մազնիևին (Մազնիաշվիլի)՝ նոր համալրումներով: Շուլավերի շրջանում մարտի մեջ

[281] Տե՛ս նույն տեղում, վավ. 59, էջ 79:

[282] Տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 221:



մտան վրացական ինքնաթիռներ, որոնց ռմբակոծության հետևանքով վիրավորվեց բազմիցս իր քաջությամբ աչքի ընկած Կուռո Թարխանյանը: Դիրքային կատաղի մարտերը շարունակվեցին մինչև դեկտեմբերի 28-ը:

Միջնորդի դեր ստանձնած անգլիացի զինվորական է. Գրինը դեռ դեկտեմբերի 15-ին Ղարաքիլիսայում հանդես էր եկել զինադադար հաստատելու հետևյալ պայմաններով. կրակի դադարեցում երկու շաբաթով, վրացական զորքերի շտապ դուրսբերում Ախալքալաքի գավառից ու Բորչալուից մինչև Խրամ, այդ տարածքներ չեն մտցվելու նաև հայկական զորքեր, ախալքալաքցի գաղթականների շուտափույթ վերադարձ հայրենի օջախներ և այլն[283]:

Դեկտեմբերի 25-ին անգլիացի գեներալ Ու. Ռայկրոֆտը, ֆրանսիացի գնդապետ Պ. Շարդինյեն և Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիան, առանց Հայաստանի ներկայացուցիչների հետ խորհրդակցելու, ստորագրեցին զինադադարի համաձայնագիր հիմնահարցի լուծման ուղիների վերաբերյալ: Այն նախատեսում էր ռազմական գործողությունների դադարեցում, Ջալալօղլի-Դսեղ գծից հյուսիս ընկած տարածքում վրացական, իսկ դրանից հարավ շրջանում՝ հայկական զորքերի տեղակայում: Ախալքալաքում հաստատվելու էր վրացական վարչակարգ՝ դաշնակից երկրների վերահսկողությամբ: Վարչակազմի մեջ ընդգրկվելու էին տեղի հայ և մահմեդական բնակչության ներկայացուցիչներ: Վրացական զորքերի թվաքանակը գավառում պետք է լիներ խիստ սահմանափակ:

Հայաստանի կողմից առաջարկվեց համաձայնագիրը ստորագրել Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանին: Նա կտրականապես հրաժարվեց՝ առարկելով Ախալքալաքին վերաբերող ձևակերպմանը: Անգլիացիները համաձայնագրի տակ ավելացրին հետևյալ նախադասությունը. «Պարոն Ջամալյանը համաձայն չէ Ախալքալաքի գավառը Վրաստանի կողմից գրավվելու կետին»: Փաստորեն դաշնակիցները, հաշվի չնստելով հայկական կողմի կարծիքի հետ, համաձայնագիրը փորձեցին դնել գործողության մեջ: Նման պայմաններում Հայաստանին մնում էր հաշտվել ստեղծված իրավիճակի հետ:

Դեկտեմբերի 29-ին Հայաստանի ներկայացուցիչ Մ. Հարությունյանը Մեծ Ղարաքիլիսայում անգլիացիների հորդորով և մի նախապայմանով, որ զինադադարով նախատեսվող պայմանները ժամանակավոր են և դեռ ենթակա են վերանայման, ստորագրեց վերոհիշյալ համաձայնագիրը: Այն բացահայտորեն միակողմանի էր և բխում էր միայն վրացիների շահերից: Մի քանի օր անց՝ դեկտեմբերի 31-ին, վրաց-հայկական պատերազմը դադարեցվեց:

1919 թ. հունվարի 9-ից 17-ը Թիֆլիսում կայացավ հաշտության խորհրդաժողով, որը նախագահում էր անգլիական բանակի գնդապետ Ռ. Ստյուարտը: Հայկական պատվիրակության ղեկավարն էր Մ. Հարությունյանը, վրացականինը՝ արտգործնախարար Ե. Գեգեչկորին:

Կնքված հաշտությունը խիստ ձեռնտու էր վրացական կողմին: Հայկական զորքերի ռազմական հաջողություններն ի չիք էին դառնում: Լոռու ազատագրված ավելի քան 40 գյուղեր (մեծ մասամբ՝ հայաբնակ) մտնում էին չեզոք գոտու մեջ[284]: Գոտու հյուսիսային սահման էր դառնում այն գիծը, որտեղ կանգնած էր վրացական զորքը պատերազմի վերջին օրվա՝ դեկտեմբերի 31-ի վիճակով, այն դեպքում, երբ Հայաստանի վերահսկո-

[283] Տե՛ս Զանգ, 20 դեկտեմբերի, 1918:

[284] Լոռու չեզոք գոտին բաժանվեց 3 տեղամասերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ 4–5 վոլոստներ՝ գավառակ-գյուղախմբեր: Ալավերդիի տեղամասն ուներ 4 վոլոստ՝ 11 գյուղերով, Ուզունլարինը (այժմ Օձուն) 4 վոլոստ՝ 11 գյուղերով, Վորոնցովկայինը՝ 5 վոլոստ՝ 15 գյուղերով: Չեզոք գոտու գյուղերի ցանկը և սահմանները տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 56, թ. 3–4:

ղության տակ անցած ամբողջ տարածքն ազատվելու էր հայկական ուժերից: Գավառի կառավարումն անցնում էր անգլիացի գեներալ–նահանգապետին, որի տեղակալներից մեկը պետք է լիներ հայ, մյուսը՝ վրացի:

Ախալքալաքի հարցը, որ խորհրդաժողովի ամենասուր խնդիրներից էր, քննարկվեց հունվարի 13–ի նիստում: Ստյուարտի ճնշման տակ հայկական պատվիրակությունը համաձայնվեց վրացական նախագծի հետ, որը Վրաստանին ոչ միայն արտոնում էր երկու վաշտ (225 զինվոր) պահել Ջավախքում, այլև առանց դաշնակիցների ներկայության և վերահսկողության բացառում Հայաստանի որևէ մասնակցություն Ախալքալաքի գավառի գործերին: Ավելին՝ վրացի գեներալ Ա. Գեդևանովի պահանջով արձանագրության մեջ մտցվեց հատուկ կետ, ըստ որի՝ Վրաստանի նկատմամբ Հայաստանի «որևէ ագրեսիվ գործողություն» գնահատվելու էր իբրև թշնամական քայլ դաշնակիցների հանդեպ[285]: Ջավախքը թեև դիտվում էր վիճելի տարածք, սակայն մնում էր վրացիների վերահսկողության ներքո: Տեղի վրացական վարչության գործունեության վերահսկումը միայն ձևականորեն էր դրվում Անտանտի երկրների ներկայացուցիչների վրա, որոնք այն իրականացնելու էին գավառի հայ և մահմեդական բնակչության օժանդակությամբ[286]:

Հայ–վրացական եղբայրասպան պատերազմն ավարտվեց, ազգամիջյան լարվածությունը հետզհետե տեղի տվեց, և երկու երկրների միջև շուտով հաստատվեցին ընդունելի միջպետական հարաբերություններ: 1919 թ. մարտին երկու հանրապետությունները ճանաչեցին միմյանց անկախությունը, վերականգնվեց երկաթուղային երթևեկությունը, աշխուժացան տնտեսական կապերը: Սակայն Վրաստանի կառավարությունը, օգտագործելով իր աշխարհագրական դիրքը, չմոռացավ ժամանակ առ ժամանակ կատարել հակահայկական քայլեր՝ ընդհուպ մինչև տնտեսական շրջափակումն ու արտասահմանից հայ սովյալների համար նախատեսված սննդամթերքի թալանը:

1919 թ. ապրիլի վերջին և մայիսի սկզբին, երբ գեներալ Անդրանիկ Օզանյանը Թիֆլիսում էր, երկաթուղին դեռ կանոնավոր և անվտանգ չէր գործում: Հովհաննես Թումանյանի մասնակցությամբ արտգործնախարար Ե. Գեգեչկորու հետ հանդիպման ժամանակ Անդրանիկը Վրաստանի կառավարությանը խորհուրդ տվեց ձեռնպահ մնալ Հայաստանը շրջափակելու տմարդի քայլերից, որոնք ուղղակիորեն հարվածում են երկու ժողովուրդների շահերին: Անդրանիկի միջնորդությունը դրական ազդեցություն ունեցավ Բաթում–Թիֆլիս–Երևան երկաթուղին վերագործարկելու խնդրում:

Բարեբախտաբար, ռազմական այդ բախումից հետո հայ–վրացական քաղաքական շրջանակներում երկուստեք գերակշռեց հարցերը միմիայն քաղաքական ճանապարհով լուծելու մոտեցումը, որին կողմերը հետագայում հարազատ մնացին անգամ ամենաբարդ իրավիճակներում: Թեև վիճելի խնդիրներից շատերն այդպես էլ լուծումներ չունեցան, սակայն բարեկամական հարաբերությունները պահպանվեցին:

1919 թ. հունվարյան հայ–վրացական խորհրդաժողովից հետո անգլիացիների առաջարկած լուծումից դժգոհ մնացած հայկական կողմը փորձեց հարցը տեղափոխել միջազգային ատյաններ: Բեռնում՝ 2–րդ ինտերնացիոնալի խորհրդաժողովում (1919 թ. փետրվար), վրաց մենշևիկները, այդ թվում՝ նրանց ղեկավարներից Ա. Չխենկելին, ընդունեցին ՀՅԴ ներկայացուցիչների առաջարկությունը հայ–վրացական տարածքային խնդիրը խորհրդաժողովի օրակարգ մտցնելու մասին: Ինտերնացիոնալի կուսակցությունների մե-

[285] Տե՛ս նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 104, թ. 78–79:

[286] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)..., վավ. 63, էջ 82–83: Հայ–վրացական պատերազմի և 1919 թ. հունվարյան խորհրդաժողովի մասին տե՛ս նաև Մելքոնյան Ա., Ջավախքը 19–րդ դարում և 20–րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 295–309, 450–456:



ծամասնության առաջարկով վիճելի տարածքների պատկանելության սկզբունք հռչակվեց ազգերի ինքնորոշման իրավունքը, իսկ դրա կիրառման միջոց՝ հանրաքվեն[287]:

Անշուշտ, այդ սկզբունքի կիրառման դեպքում Լոռու հայաբնակ մասի և Ախալքալաքի հիմնահարցերը կլուծվեին հօգուտ Հայաստանի: Ամենայն հավանականությամբ, Բեռնում վրաց մենշևիկներն «ընդունել էին» հանրաքվեի գաղափարը հանուն Եվրոպայի սոցիալիստական կուսակցությունների հետ համերաշխության և ժամանակ շահելու նպատակով, առավել ևս, որ անգլիացիների կողմից Լոռու չեզոք գոտու ստեղծումով վրացիներն արդեն որոշակի ազդեցություն էին ձեռք բերել այդ տարածքի նկատմամբ, իսկ Ջավախքն էլ շարունակում էր մնալ իրենց վերահսկողության ներքո:

Շուտով 2–րդ ինտերնացիոնալի գործադիր մարմինը մերժեց միջնորդ դատարանի վերաբերյալ վրացական առաջարկը և կրկնեց Բեռնի խորհրդաժողովի որոշումը՝ միակ արդարացի սկզբունք համարելով հանրաքվեն: Լոռիում և Ախալքալաքում հանրաքվե անցկացնելու համար որոշվեց տարածաշրջան ուղարկել սոցինտերնի հատուկ պատվիրակություն: ՀՅԴ ներկայացուցիչներն առաջարկեցին նաև, որ հանրաքվեի ժամանակ բացառվի որևէ ճնշում կամ բռնամիջոց, և գավառներից դուրս բերվի վրացական զորքը՝ բնակչության կամքն ազատորեն դրսևորելու հնարավորություն ընձեռելու համար: Վրացական կողմը չընդունեց այդ առաջարկությունը: Հետագա ամիսներին ազգերի ինքնորոշման իրավունքի հարգման, հանրաքվեի անցկացման, էթնիկ–ազգագրական սկզբունքի կիրառման և այլ միջազգային նորմերի ու մոտեցումների հիման վրա լուծումների հասնելու հայկական կողմի բոլոր ջանքերն ապարդյուն անցան:

1919 թ. գարնանը Վրաստանը, ապաշրջափակելով հաղորդակցության ուղիները, միաժամանակ հրաժարվեց ընդհանուր անդրկովկասյան գույքից մասնաբաժին հանել Հայաստանին: Միայն հունիսին, երբ հայկական կառավարությունը զգալի գումարներով վագոններ գնեց և հաց ներկրեց հանրապետություն, որից օգնության բաժին հանվեց նաև Ջավախքի հայ ու նաև վրացի սովյալ բնակչությանը, տեղի ունեցավ վրացական իշխանությունների հակահայկական քաղաքականության որոշ մեղմացում:

Եվ, այնուամենայնիվ, բռնությունները շարունակվում էին: Գեներալ Մակաևը զինաթափեց Ջավախքի հայ բնակչությանը, Իմերեթիայից և Թիֆլիսից բերված վրացական միլիցիայի միջոցով հաստատեց խստագույն ռեժիմ: Ընդ որում՝ վրացիներն ու մեսխեթցի թուրքերը չզրկվեցին զենք կրելու իրավունքից: Վրացական միլիցիան և ժողովրդական (ազգային) գվարդիան հայատյաց Ս. Նադիրաձեի գլխավորությամբ հաճախ մտնում էին հայկական բնակավայրերը և կամայականորեն հարկեր հավաքում, բռնագրավում հացահատիկը, գյուղատնտեսական այլ մթերքներ ու անասուններ: Իրեն շատ սանձարձակ պահող միլիցիայի և գյուղացիության միջև երբեմն բախումներ էին լինում: Մարտի սկզբին ողբերգական դեպք արձանագրվեց Կորխ գյուղում: Երբ գյուղացիները փորձեցին թույլ չտալ թալանել իրենց, ոստիկանները կրակ բացեցին: Եղան զոհեր: Ժամանակի մամուլը գրում է, որ այդ շրջանում՝ վրաց տիրապետության օրոք սկիզբ առած ավազակությունն ավելի ընդարձակվեց, անհատական թալանը փոխվեց զանգվածայինի: Նույնպիսի վիճակում էր նաև հարևան Ախալցխայի հայությունը: Դեպքերի ականատես Ե. Սիմոնյանը դառնությամբ գրում էր, որ «...Թուրքերին հաջորդող վրաց մենշևիկների իշխանությունն էլ մխիթարական չէր. դարձյալ իրար հետևից եկան դառն օրեր, անիշխանություն, խռովություն, ավեր ու բռնություն: ...Կաշառքը, ազգային խտրականությունը, ծեծը, կողոպուտը, սպանությունները ահռելի չափերի էին հասել»[288]:

[287] Տե՛ս Ջամալեան Ա., Հայ–վրացական կնճիռը. – Հայրենիք, 1928, թիվ 6 (ապրիլ), էջ 97–98:

[288] Սիմոնյան Ե., Ախալցխան կրակե օղակում, 1917–1921 թվականների դեպքերի հուշագրություն, Երևան, 2000, էջ 111, 115:

*1919 թ. փետրվարին Ախալքալաքում վրացական իշխանությունները հապշտապ «կազմակերպեցին» գյուղացիական համագումարի՝ ինչ-որ իմաստով իշխանության տեղական մարմինների ընտրություններ: Հայ բնակչության մեծամասնությունը չմասնակցեց ընտրություններին, որոնք անցան բացահայտ շանտաժի, պետական շրջանակների քաղաքական ու գաղափարական ուժեղ ճնշման պայմաններում: Պատահական չէ, որ բացարձակ փոքրամասնություն կազմող վրացիները գավառում ստացան հինգ, իսկ մեծամասնություն ունեցող հայերը, թուրքերը և ռուս դուխոբորները՝ մեկական տեղ*[289]*: Ավելի մեծ կեղծիքներով անցկացվեցին 1920 թ. ամռանը տեղի ունեցած Վրաստանի սահմանադիր ժողովի ընտրությունները:*

*Սկսվեց Ջավախքը վրացիներով «գաղութացնելու» քաղաքականությունը: Մինչև 1920 թ. վերջը պետության հովանավորությամբ Ախալքալաքի գավառ փոխադրվեցին մի քանի հարյուր ընտանիք իմերեթցի վերաբնակիչներ: Ոտնձգություններ եղան Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցուն պատկանող Կարծախ, Դադեշ, Սուլդա և այլ գյուղերի հողատարածքների նկատմամբ: Հայերը, որ կազմում էին Վրաստանի Հանրապետության բնակչության մեկ հինգերորդը, զրկվեցին ինքնուրույն կրթամշակութային կյանքի կազմակերպման հնարավորությունից, ինչն ունեին ցարական տիրապետության ժամանակաշրջանում: Պետական հոգածությունից զուրկ վիճակում հատկապես խառը՝ հայ-վրացական դպրոցների զգալի մասը փակվեց: Հայ բնակչության համար մասնավորապես Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում լուրջ դժվարություններ ծագեցին պետական գործավարությունը միայն վրացերենով կատարելու կառավարական որոշման կապակցությամբ:*

*1919 թ. սեպտեմբերի 17-ին Թիֆլիսում բացվեց հայ-վրացական նոր խորհրդաժողով: Վրաստանը ներկայացնում էին Ն. Ռամիշվիլին և Ս. Մդիվանին, իսկ Հայաստանը՝ Ս. Մամիկոնյանը և Ս. Խաչատրյանը: Վրացական կողմը, հավանաբար զգուշանալով դեռևս օգոստոսի վերջին Լոռու չեզոք գոտուց անգլիացիների հեռանալուց հետո հայ-վրացական նոր կոնֆլիկտից, առաջարկեց սահմանների «փոխզիջումային» տարբերակ. Հայաստանին թողնել Աքորի գյուղից հարավ ընկած տարածքը, Լոռու դաշտը (Ջալալօղլի-Վորոնցովկա), իսկ Վրաստանին՝ այդ գծից հյուսիս ընկած հողերը և Ախալքալաքի գավառը: Ընդ որում՝ այդ «զիջումը» դիտվում էր ժամանակավոր՝ մինչև Փարիզի վեհաժողովի կողմից Հայաստանի սահմանների հարցի լուծումը:*

*Հայկական պատվիրակությունը հայտարարեց, որ իր կառավարությունից լիազորված է հօգուտ Վրաստանի՝ զիջելու Խրամի (Ծալկա) շրջանը, Ախալքալաքի գավառի հյուսիսային և կենտրոնական մասը: Ջավախքի հարավային մասը, լճերի շրջանը՝ Հեշտիա-Սաթխա-Հոկամ-Ազմանա գյուղերով, մինչև Կուր գետը, մնալու էր Հայաստանին: Թեև կողմերից ոչ մեկին չբավարարեց մյուսի նախագիծը, և գրավոր համաձայնություն ձեռք չբերվեց, բայց քանի որ հայկական կողմը Ախալքալաքի մեծ մասը և ամբողջ Ծալկան զիջելու պատրաստակամություն էր հայտնել, Վրաստանը համաձայնեց Հայաստանին տրամադրել տարանցիկ առևտրի, հեռագրածի և այլ արտոնություններ: Ստեղծված* status quo*-ն ձեռնտու էր վրացական կողմին. անգլիացիների հեռանալուց հետո Վրաստանի իշխանությունը, փաստորեն, տարածվեց ոչ միայն Ջավախքի, այլ նաև Լոռու չեզոք գոտու վրա:*

*1919 թ. նոյեմբերի 3-ին Թիֆլիսում երկու երկրների միջև վրացական կողմի առաջարկով ստորագրված պայմանագիրը, որը նախատեսում էր վիճելի բոլոր հարցերում առաջնորդվել բացառապես խաղաղ եղանակներով կամ չեզոք արբիտրաժի օգնությամբ, ավելի ամրապնդեց վրացական վարչակարգը վիճելի գավառներում.*

[289] Տե՛ս Զանգ, 22 մարտի, 1919:



*Հայաստանը զրկվեց տվյալ հարցում կոշտ դիրքորոշում հանդես բերելու հնարավորությունից և «ապավինեց» միայն անհեռանկար բանակցային գործընթացին: Եվ պատահական չէ, որ Ս. Մամիկոնյանն ու Ս. Խաչատրյանը, ովքեր մնացին Թիֆլիսում և շարունակեցին հայ-վրացական բանակցությունները, ոչ մի արդյունքի չհասան: 1919 թ. վերջից Հայաստանի կառավարությունը, համոզվելով, որ անիմաստ է վիճելի տարածքների խնդրում Վրաստանից փոխզիջում ակնկալելը, փորձեց հարցը տեղափոխել Փարիզի վեհաժողով:*

*Չկարողանալով լուծում տալ սահմանային վեճերին՝ հայկական և վրացական պատվիրակությունները դիմեցին Անտանտի երկրների օգնությանը: Ըստ 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագրի 72-րդ հոդվածի՝ անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանազատման խնդիրը պետք է լուծվեր կողմերի ներկայացուցիչներից բաղկացած չահագրգիռ հանձնաժողովի ջանքերով, իսկ չլուծվելու դեպքում՝ դաշնակից երկրների հայեցողությամբ: Հատկանշական է, որ հարցը Փարիզ տեղափոխելուց հետո էլ ուղղակի բանակցությունները շարունակություն ունեցան: Դրանք չդադարեցին նաև 1920 թ. սեպտեմբերի վերջին սկսված թուրք-հայկական պատերազմի օրերին:*

*Ռազմաճակատում հայկական բանակի կրած անհաջողություններից հետո հայկական կողմի համար առաջնային էր դարձել Վրաստանի հետ Թուրքիայի դեմ ընդհանուր ճակատի ստեղծումը, և Հայաստանի կառավարությունը հանդես եկավ այդպիսի առաջարկով: Վրացական ղեկավարությունը, որ պատերազմի առնչությամբ հայտարարել էր իր չեզոքությունը, իրականում գաղտնի համագործակցում էր քեմալականների հետ:*

*Ռազմաքաղաքական ու դիվանագիտական մեկուսացման պայմաններում Հայաստանը ստիպված եղավ տեղի տալ վրացիների ճնշումներին: 1920 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում Վրաստանի և Հայաստանի միջև կնքված համաձայնագրով հայկական կողմը քեմալական թուրքերի մուտքը Բորչալուի գավառ կանխելու նպատակով ընդունեց երեք ամիս ժամանակով Լոռու չեզոք գոտի վրացական զորք մտցնելու Վրաստանի առաջարկությունը. ընդ որում՝ համաձայնագրի 2-րդ կետով ընդգծվում էր, որ «վրացական զորքի գտնվելը չի ծնում որևէ նոր իրավունք (բնականաբար վրացիների համար – խմբ.) այդ տարածքի նկատմամբ»*[290]*: Սակայն վրացական կառավարությունը, չբավարարվելով Լոռիով, այդ նույն ժամանակ զորք մտցրեց Կարսի մարզի հյուսիսային շրջան՝ Արդահանի գավառ, որի գրավման մասին համաձայնագրում ոչինչ նշված չէր: Հայ-վրացական վիճելի մյուս տարածքների՝ Արդվինի և Ախալքալաքի գավառների խնդիրը մնաց առկախ, քանի որ դրանք քեմալականների կողմից բռնազավթվեցին:*

*Մտնելով Լոռի՝ վրացիները մոռացան իրենց խոստումները և սկսեցին բռնություններ գործադրել տեղի հայ բնակչության նկատմամբ: Այդ կապակցությամբ Վրաստանի արտաքին գործերի նախարարությանը հղված ինչպես Հայաստանի Հանրապետության կառավարության, այնպես էլ դեկտեմբերին նրան փոխարինած Հայհեղկոմի բողոք-հեռագրերը մնացին անպատասխան:*

*1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին Խորհրդային Հայաստանի ղեկավար մարմին Հայհեղկոմը ինչպես 1919 թ. հունվարյան, այնպես էլ 1920 թ. նոյեմբերի 13-ի հայ-վրացական համաձայնագրերը հայտարարեց իրավական ուժը կորցրած փաստաթղթեր*[291] *և գործուն քայլեր ձեռնարկեց Լոռին խորհրդայնացնելու ու Խորհրդային Հայաստանին միացնելու ուղղությամբ:*

[290] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)..., վավ. 300, էջ 340–341:

[291] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 24, թ. 53, 80–81:

**Աղբյուրը՝** *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 116-125: